


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ



« 10 » հունվար 2022թ.

No 69 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ՖԱՐՄԱՏԵՔ ՓԲԸ, 0064, ԵՐԵՎԱՆ, ՐԱՖՖՈՒ Փ. 111» ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ (ԴԵՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԻՐԱՎԱՏԵՐ՝ «ՖԱՐՄԱՏԵՔ ՓԲԸ, 0064, ԵՐԵՎԱՆ, ՐԱՖՖՈՒ Փ. 111, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ») «ՊԵՐԻԴԻԱԼ, ԳԼՅՈՒԿՈՋ ԱՆՋՈՒՐ, ՆԱՏՐԻՈՒՄԻ ՔԼՈՐԻԴ, ՆԱՏՐԻՈՒՄԻ ԼԱԿՏԱՏ, ԿԱԼՑԻՈՒՄԻ ՔԼՈՐԻԴ, ՄԱԳՆԵՋԻՈՒՄԻ ՔԼՈՐԻԴ ԼՈՒԾՈՒՅԹ ՊԵՐԻՏՈՆԵԱԼ ԴԻԱԼԻՋԻ ՀԱՄԱՐ 22,7ՄԳ/ՄԼ+5,38ՄԳ/ՄԼ+4,48ՄԳ/ՄԼ+0,184ՄԳ/ՄԼ+0,051ՄԳ/ՄԼ; 250ՄԼ ՊԼԱՍՏԻԿԵ ՓԱԹԵԹ, 500ՄԼ ՊԼԱՍՏԻԿԵ ՓԱԹԵԹ, 750ՄԼ ՊԼԱՍՏԻԿԵ ՓԱԹԵԹ, 1000ՄԼ ՊԼԱՍՏԻԿԵ ՓԱԹԵԹ, 1500ՄԼ ՊԼԱՍՏԻԿԵ ՓԱԹԵԹ, 2000ՄԼ ՊԼԱՍՏԻԿԵ ՓԱԹԵԹ, 2500ՄԼ ՊԼԱՍՏԻԿԵ ՓԱԹԵԹ, 3000ՄԼ ՊԼԱՍՏԻԿԵ ՓԱԹԵԹ, 5000ՄԼ ՊԼԱՍՏԻԿԵ ՓԱԹԵԹ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասի 2-րդ կետը, «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի փորձաքննության 28.12.2021 թվականի N 0103129121 բացասական եզրակացությունը՝ Հայաստանի Հանրապետության «ՖարմաՏեք ՓԲԸ, 0064, Երևան, Րաֆֆու փ. 111» դեղագործական ընկերության արտադրության (դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ «ՖարմաՏեք ՓԲԸ, 0064, Երևան, Րաֆֆու փ. 111, Հայաստանի Հանրապետություն») «Պերիդիալ, գլյուկոզ անջուր, նատրիումի քլորիդ, նատրիումի լակտատ, կալցիումի քլորիդ, մագնեզիումի քլորիդ լուծույթ պերիտոնեալ դիալիզի համար 22,7մգ/մլ+5,38մգ/մլ+4,48մգ/մլ+0,184մգ/մլ+0,051մգ/մլ; 250մլ պլաստիկե փաթեթ, 500մլ պլաստիկե փաթեթ, 750մլ պլաստիկե փաթեթ, 1000մլ պլաստիկե փաթեթ, 1500մլ պլաստիկե փաթեթ, 2000մլ պլաստիկե փաթեթ, 2500մլ պլաստիկե փաթեթ, 3000մլ պլաստիկե փաթեթ, 5000մլ պլաստիկե փաթեթ» դեղի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման վերաբերյալ փորձագիտական թիվ 20392 առ 28.12.2021թ. բացասական եզրակացությունը, առ այն, որ որակի փորձաքննության

Տեսե՛ք. 11.01.22 Տ. Պ. Ե. Բ.

արդյունքները չի համապատասխանում ՊերիԴիալի «Վերականգնող շաքարների քանակը» կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Մերժել Հայաստանի Հանրապետության «ՖարմաՏեք ՓԲԸ, 0064, Երևան, Րաֆֆու փ. 111» դեղագործական ընկերության արտադրության (դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ «ՖարմաՏեք ՓԲԸ, 0064, Երևան, Րաֆֆու փ. 111, Հայաստանի Հանրապետություն») «ՊերիԴիալ, գլյուկոզ անջուր, նատրիումի քլորիդ, նատրիումի լակտատ, կալցիումի քլորիդ, մագնեզիումի քլորիդ լուծույթ պերիտոնեալ դիալիզի համար 22,7մգ/մլ+5,38մգ/մլ+4,48մգ/մլ+0,184մգ/մլ+0,051մգ/մլ; 250մլ պլաստիկ փաթեթ, 500մլ պլաստիկ փաթեթ, 750մլ պլաստիկ փաթեթ, 1000մլ պլաստիկ փաթեթ, 1500մլ պլաստիկ փաթեթ, 2000մլ պլաստիկ փաթեթ, 2500մլ պլաստիկ փաթեթ, 3000մլ պլաստիկ փաթեթ, 5000մլ պլաստիկ փաթեթներ» դեղի գրանցումը Հայաստանի Հանրապետությունում:

2. ՀՀ առողջապահության նախարարության քարտուղարության պետ Զ. Դարբինյանին՝

1) սույն հրամանը 2-օրյա աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով էլեկտրոնային փոստի միջոցով՝ առաքել հայտատուին:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

10.01.2022

X 

ԱՆԱՅԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157